

8. ԷՐԿՈՒ ԱԽՊԸԵՐ

Մին շենում մին շատ քյաֆիր մարթ ու կնեգյ ըն ինում ըպրելիս։ Տահանց վրեշ մին պեն չի ինում, բայց շատ հավրեր ա ինում։ Էտ հըվերավն ըն ինում ըպրելիս։

Ուրերան մին օր տահանց տոն մին ղարիբ մարթ ա ղոնաղ կյամ։ Տա հըյաթավն անց կընալիս եշում ա, տըեսնում տահանց հըվրերեն մաչին մին շատ ղաշանգյ վրերցակ կա, կլխըեն էլ մին մըեծ կատար, յիրան կյիրած. «Հու էս վրրցակըեն կլոխն օտրե, թաքավրեր ա տըռնըլական, հու քարճիգյն օտրե, ամմըեն հիզիլավ պիրանան վրեսկե յա վրեր ըծըլականա։ Տնըտարերն էլ կյիրիլկարթիլը գյիդաշիս չըն ինում, պենան խաբար չին։ Էտ ղոնաղը վրեր տա կաթթում ա, քյինամ ա տնըտարըեն կոշտը, ասում.— Օղում ըմ քըզնհետ ըխպըրանամ։ Տնատարն ասում ա.—Լավ կինի։

Ղոնաղը տահանց տանն էրկան ա կենում, մին օր էլ սուտըսուտ հիվընդանում։ Վրեր հըրցնում ըն, թա իշտահը հինչու վա տամ, տա ասում ա.—Էն մըեծ, ղաշանգյ վրերցակը մուրթեցեքյ, կլոխն ան քարճիգյը ինձ տուվեքյ, օտրեմ։ Տնատարն օղում ա, թա օրիշ հավ մորթե, ղոնաղն ասում ա.—Չէ՛, նա յա իշտահըս տամ։ Տնատարը քյինամ ա էտ վրերցակը մորթում, իփնում ըն, կուտորում, տինում կուխնումը, վրեր տան ղունաղրեն։ Տահանց էլ տա-

ոբ-տասներկու տղերեկան էրկու տղա յա ինում, մինին անումը Սըմավար, մինինը՝ Ջայնիկ։

Սըմավարը նան Ջայնիկը ըշկոլան սոված կյամ ըն, Սըմավարը վըրցակեն կլոխն ա յոր օնում օտում, Ջայնիկը՝ քարճիգյը։ Տնըտարերը կյամ ըն թա վըրցակեն կլոխը նան քարճիգյը տանըեն տան ղունաղեն, տըեսնում ըն կավըեչ։ Մըեսը տանում ըն տամ ղունաղեն, օտում չի։ Տնատարն ասում ա, վըեր կլոխը նան քարճիգյը խոխեքյը կերալ ըն։ Ղունաղը խոսում չի։

Մին քանի օր վըեր անց ա կենում, ղունաղը տնատըերենը ասում ա.—Խուխոցըտ մորթե, մինին հըղողը, մինին էլ ջիգյարը տունա կալ, պեր օտըեմ։ Էտ խոսկը ղունաղան ըսպըսելիս չըն իլալ, բայց դե վըեր ըխպըրացալ ըն, տնատարն ըստիրված ա իլալ խուխոցը մորթե։ Ճենան մին ղասաբ ա ծեն տամ, տրան ասում.—Խոխեքյը տար մին ղրաղ տըեղ մուրթոտե, մինին հըղողը, մինին էլ ջիգյարը տունա կալ, պեր, տամ ղունաղես, օտըե։ Էտ ղասաբը տրան ասում ա.—Մին գյանդա մարթու խոսկավ խուխոցըտ մըրթոտում ը՞ս։ Ճանն ասում ա.—Հինչ ա՞նըեմ, խուխոցես շատ ըմ սիրում, դե վըեր էտ մարթին նհըեստ ըխպըրացալ ըմ, կարել չըմ նրա խոսկը կոտրեմ։

Ղասաբը խուխոցը յոր ա օնում, տանում ճենան տունա մին ղրաղ տըեղ, գյունդում չի, թա հինչ անըեն։ Բունդանն եշում ա, տըեսնում մին պըռավաբ շոն տըեղ նստած։ Խոխոցն ասում ա.—Ամեքյա մին քար եր կալիքյ։ Ինքյն էլ ա մին մըեծ քար յոր օնում, յիրա՞ յըն տըեռնում, քըրեբավ էտ շանն ըսպանում։ Ղասաբն էտ շանը հըղողն ան ջիգյարը տունա ա օնում խուխոցը մինին հըլավումը կապում, յոր օնում։ Խուխոցն էլ ասում ա.—Կլոխ եր կալիքյ, հղե իլիքյ, քըմըկներեստ եշիքյ վուչ, վըեր ես տըեռնաք, ծեր հնար ծեզ ըսպըննական ա, քյեցեքյ շատ հեռու երգյիր, վըերգեղ շեն յա քաղաք պըտահե, ընդըեղ ուրուր բութա կանեքյ, ապրեքյ։

Ղասաբը խուխոցը հղե յա անում, ինքյը շանը հըղողը նան ջիգյարը տանում տամ տահանց հորը։

Սըմավարը նան Ջայնիկը հղե յըն ինում, քյինում։ Շատ ըն քյինում, թա խրեգյ, հըսնում ըն մին քաղաք։ Էտ քըղաքեն շորս ընգյունավը պեցուր հասար ա ինում քաշած, մին դըրբըղա յել յիրա՞ ըրած։ Տահանք եշում ըն, տըեսնում մին մարթ էտ դըրբըղավը նի մտավ։ Էտ մարթին նհըեստ նի յըն մնում, քյինամ տըեսնում մին տըեղ սաղ քըղաքեն ժուղովուրթը հըվաքված, թաքավորը ըն ճոկում։ Ղուշը պեց ըն թողում, հոնը կլխըե վըեր կյա՞, թաքավորի-

ը նա պիտի տրեռնա։ Ղուշը վրեր պեց ըն թողում, քյինամ ա Սըմավարեն կըլխեն վրեր կյամ։ Ժուղովուրթը զարմանում ըն, ասում.—էս պիրանան կըթնավրեա կյանիս խոխա՞ն պիտի մըեր թաքավրեն ինի։

Խուխեն յոր ըն օնում տանում քցում մին օթաղ, ղուշը պեց թողում։ Էս գոնում ղուշը թռչում ա քըղաքան տուս կյամ, էլ կյամ չի։ Քյինամ ըն տոռնը պեց անում, Սըմըվարեն տուս օնում, ղուշը թռչում ա, նորից կյամ տըրա կլխեն վրեր կյամ։ Ճըրըրեն կըտրած, պիրում ըն տրան թաքավրեր տինում։

Մեհենգյ քյինանք տրեսանք Ջա՞նիկը հինչ տրե՞ռավ։ Սա յել քյինամ ա քըղաքեն գըրբըզավը տուս կյամ ընդեղ կենում, վրեր ախպերը տուս կյանիս կարե տրեսնա։ Տըեղ վրեր շատ կենում ա, ախպերը կյամ չի։ Մրթնում ա, քունավ ա հընցնում, մնամ տրեղ։ Քշերեն կեսին զուրթնանում ա, տրեսնում մին կյեզան նկած գըրբըզավը կլեխը կոխած, վրեչ կարում ա նի մեննե, վրեչ էլ կարում ա կլեխը տուս օնրե։ Տա քյինամ ա էտ կյեզանին մաշկրեն նստում, ջուրումը մին տեռնակ ա ինում, տուս ա օնում, ըրըրվելավ վիզը կտրում, ըսպանում, տրեղ վրեր քցում։ Ինքն էլ քունավ ա հընցնում, մնամ տրեղ։

Գըրբըզեն յիրա վրեննը կացած պահակը վրեր զուրթնանում ա տրեսնում կյեզանն ըսպանած տրեղ վրեր քցած, էտ տղան էլ տրա մաշկրեն քունավ հընցած, տրան խեխտում ա, տանում տուսի փեյնումը թաղում, ինքը քյինամ թաքավրերեն ասում.—էս քշեր կյեզանին ըսպանալ ըմ, յեշն էն ա գըրբըզեն քշտին վրեր քցած։ Տու մի ասրել էտ կյեզանն ամմրեն քշեր կյանիս ա ինում քըղաքան վեց-օխտը մարթ կյուղընալիս, տրենելիս։ Քըղաքեն հասարը հենց տրա հետ յըն քաշած ինում, գըրբըզան էլ յիրա ըրած։ Հայտարարած ըն ինում, վրեր հու կարե էտ կյեզանին ըսպանե, թաքավրությունեն կեսը տան նրան։

Թաքավրերեն նազիր-վեզիրը քյինամ ըն տրեսնում էտ կյեզանն ըսպանած, տրեղ վրեր քցած։ Քըղաքումը մրեթ ուրախություն ըն սարքում, թաքավրությունեն կեսը տամ էտ գըրբըզեն յիրա վրեննը կըցըրած պահակեն։

Մին օր մին ախճիգյ ուրանց փեյնը տանում ա, վրեր գըրբըզանը տուս թափրե, եշում ա, տրեսնում փեյնին տակրեն մին պեն ա տուրուր կյամ։ Վրեսեյան նհրեա փախնում ա քյինամ տուն, մորն ասում իսաի պեն ըմ տրեսալ։ Մարը հըվատում չի։ Ախճիգյը նորից ա քյինամ ընդեղ, տրեսնում մին ժըեռք ա տուս նկած փեյնին

իրենը, ուրուր ա կյան։ Նորից ա քյինում մորը կոշտը, մարը ըմբռկանը նհրետ եր ա կենում քյինում, փեյնը քանդում ըն տղրին տուն օնում, տրեսնում հաչա տաղ։ Էտ կենգյն էլ ետ քըղաքեն ամենալավ դոխտուրն ա ինում, տանում ա ուրուն տուն, մին քանի ամրես պահում, լավ բըժըժկում, ետնան հըրցըփորց ա անում, էտ տղան ասում ա.—էն ա մըտես, վըեր ախպորըս կլխըեն դուշը վըեր կյաչան ետն ուրուն կուրցըրալ ըմ, քյնցալ դըրբըզան տուն նըստալ, եշալ, վըեր տուն կյաչիս տրեսնամ. տրեղ քունավ ըմ հընցալ, քշերեն կեսումը դուրթենցալ ըմ, տրեսալ մին կյեզան կլոխը կոխած դըրբըզեն դաթը, վըեչ կարում ա նի մնեն, վըեչ էլ կարում ա տուն օնըն. տինակավ էտ կյիզանեն վիզը կտրում ըմ, մաշկեն պրանվում, քունավ հընցնում, մինգյել աշկըս պենում ըմ, ինձ ըստեղ տրեսնում։

Ըստեղ էտ կենգյը մաննը կծում ա։ Տու մի ասըել, Սըմավար Թաքավըերն էլ տրեղ ա ինում ախպորը շոռ կյաչիս։ Էտ կենգյը Թաքավըերեն յիրա նամակ ա կյիրում, ասում ախպըերըտ էս ա քշտիս։ Թաքավըերն էտ կնգանը պիրել ա տում կոշտը, հըրցըփորց անում, տրեսնում, վըեր էտ կնգանը քշտինը դուրթուղորթ ուրան ախպըեր Զայնիկն ա։ Էտ Զայնիկն էլ հիվանդ վախտը հիշքան հանդում եր, պիրենան վըեսկեն յար վըեր ածում։ Տրանավ էտ կենգյը լավ լավ հըրուստացալ ա։

Սըմավար Թաքավըերն ուրան նաղիր-վեզիրին նհրետ քյինում ա ուրան ախպըեր Զայնիկին պիրում պալատը, Թաքավըերը տրեղ ա ախնիգյ օգում, էտ դուխտուրեն ըմբռկանն էլ Զայնիկին յիրա յըն փտակում, օխտը օր, օխտը քշեր բիրանդի հըրատանքյ անում, մնում տրեղ։ Ետնան մարթ ըն դարկում, քյինում ըն ուրանց հորը; մորը մինգյել հորը ըխպըրացուվըեն պիրել տում, հորը նան հորը ըխպըրացուվըեն ըսպանում, մորը յոր օնում, տրեղ ապրում։